*"This is a translation to Armenian of the Agreement with license number 7719. In case of differences between the Armenian and English versions of this Agreement, **the English version will prevail**"*

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

"SpringerLink" ինֆորմացիոն համակարգի լիցենզիայի տրամադրման մասին

ՀՀ կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի եւ

"Springer Science and Business Media BV"- ի միջեւ

Լիցենզիա N 7719

Լիցենզիա տրամադրող կողմի՝ ի դեմս «Springer Science and Business Media BV» ընկերության եւ լիցենզիա ստացող Կողմի՝ ի դեմս ՀՀ կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (այսուհետեւ՝ Կողմեր) միջեւ կնքվող «"SpringerLink" ինֆորմացիոն համակարգի լիցենզիայի տրամադրման մասին» պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2010 թվականի դեկտեմբերի 15-ին:

Համաձայն Կողմերի միջեւ բանակցությունների արդյունքում ձեռք բերված փոխհամաձայնության՝

Կողմերը պայմանավորվեցին հետեւյալի մասին.

Նախաբան

Լիցենզիա տրամադրող կողմը համացանցի միջոցով տրամադրում է հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերի էլեկտրոնային տարբերակը: Նյութերն ընդգրկում են էլեկտրոնային ամսագրեր՝ մուլտիմեդիա տարբերակով ներկայացված հավելվածներով, հղումների էլեկտրոնային աշխատություններ, էլեկտրոնային գրքեր, ինչպես նաեւ գրքեր՝ էլեկտրոնային բաղադրիչներով՝ (այսուհետեւ Springer-ի կողմից հրատարակված նյութեր): Նյութերը հասանելի են "SpringerLink" ինֆորմացիոն համակարգում, այսուհետեւ "SpringerLink", եւ տրամադրվում են "Springer Science and Business Media BV" կազմակերպության կամ վերջինիս հարող ընկերությունների կողմից՝ այսուհետեւ «Springer Group»: Ստորագրելով սույն Պայմանագիրը՝ լիզենզիա ստացող Կողմը հաստատում է, որ լիցենզիա տրամադրող կազմակերպությանը հարող ցանկացած ընկերություն կարող է հանդես գալ որպես պայմանագրի կողմ՝ սույն Պայմանագրի դրույթները ուժի մեջ թողնելու պայմանով:

Մաս I.

Լիցենզավորված նյութերի պարունակությունը, լիցենզիայի տրամադրումը.

1. Այն նյութերը, որոնք հանդիսանում են սույն Պայմանագրի առարկան (այսուհետեւ՝ Լիցենզավորված նյութեր), մանրամասնված են Հավելվածներ 3.1, 3.2-ում: Լիցենզավորված նյութերը բաղկացած են «Բաժանորդագրված նյութերից» (Հավելված 3.1), ինչպես նաեւ՝ «Չբաժանորդագրված նյութերից» (Հավելված 3.2): Բաժանորդագրված նյութերն ամբողջությամբ վճարվում են: «Չբաժանորդագրված նյութերը» այն նյութերն են, որոնք լիցենզիա տրամադրող կողմը տրամադրում է անվճար սկզբունքով կամ Հավելված 1-ում նշված հատուկ զեղչի պայմանով:
2. Լիցենզիա ստացող կողմի լիազորված օգտագործողները սահմանվում են որպես իրավասու անդամներ՝ ուսանողներ, ասպիրանտներ ու անձնակազմի անդամներ: Հեռավոր հասանելիությունը մատչելի է միայն լիցենզիա ստացող կողմի ուսանողներին, ասպիրանտներին ու անձնակազմի անդամներին: Հեռավոր հասանելիության այլ եղանակ թույլատրելի չէ:
3. Սույն Պայմանագրով լիցենզիա ստացող կողմին տրամադրվում է լիցենզավորված նյութերի օգտագործման ոչ-էքսկլյուզիվ լիզենզիա: Լիցենզիա ստացող կողմը լիցենզավորված նյութերն իր ցանցի միջոցով տրամադրում է իր կողմից լիազորված օգտագործողներին՝ սույն Պայմանագրի համաձայն:
4. Լիցենզիա ստացող կողմը գիտակցում է, որ տրամադրվող նյութերը պաշտպանված են հեղինակային եւ (կամ) տվյալների բազայի իրավունքներով: լիցենզիա ստացող կողմին անհասու իրավունքները խստագույնս պահպանվում են գաղտնի:
5. Եթե լիցենզիա ստացող կողմը նյութերը մատչելի կարող է դարձնել հասարակությանը միայն գիտական, հետազոտական ու անձնական նպատակներով՝ աշխատաքի վայրից կամ գրադարանի տարածքից: Հեռավոր հասանելիության այլ եղանակ թույլատրելի չէ:

ՄԱՍ 2 **Հասանելիության նկարագրությունը եւ թույլատրելի կիրառությունը**

1. Լիցենզիա տրամադրող կողմն առաջարկում է լիցենզավորված նյութերի կառավարելի հասանելիություն Հավելված 2-ում նշված անդամ-կազմակերպություններին ու դրանց կողմից լիազորված օգտագործողներին՝ տեղային անվան (domain name) եւ համցանցային պրովայդերի (IP) հասցեների միջոցով:
2. Լիցենզիա տրամադրող կողմը թույլատրում է փնրել, ցուցադրել, բեռնել, տպագրել եւ պահպանել առանձին հոդվածներ ու գրքի գլուխներ գիտահետազոտական, կրթական ու անձնական նպատակներով՝ քանի դեռ այդ գործողությունները չեն գերազանցում միջազգային հեղինակային իրավունքի սահմանված նորմերը:

3. Համատեղ գիտահետազոտական նպատակներով սահմանափակ քանակությամբ լիցենզավորված նյութերի պատահական ու ոչ-համակարգված բաշխումը լիազորված ու ոչ-լիազորված օգտագործողների միջեւ թույլատրելի է, սակայն վերափոխանցումն անընդունելի է:
4. Կրկնօրինակելն ու պահպանելը թույլատրելի է եզակի օրինակով՝ առանձին հոդվածների որոշակի քանակի համար: Լիազորված օգտագործողների կողմից ամբողջական հրատարակությունների կրկնօրինակումը եւ արխիվացումը թույլատրելի չէ:
5. Լիազորված օգտագործողները կարող են ստանալ լիցենզավորված նյութերի հեռավոր հասանելիություն՝ լիցենզիա ստացողի կողմից հաստատված ապահով ընթացակարգի միջոցով:
6. Լիազորված օգտագործողները կարող են ուղարկել եզակի հոդվածներ այլ կողմի՝ ոչ-առեւտրային գիտական հաղորդակցության համար:
7. Լիցենզիա ստացող կողմը կամ լիազորված օգտագործողները լիցենզավորված նյութերի որոշակի սահմանափակ քանակություն կարող են օգտագործել ուսումնական ծրագրերկազմելու համար:
8. Լիցենզավորված նյութերի էլեկտրոնային տարբերակը կարող է օգտագործվել որպես «Միջգրադարանային վարկ», մինչդեռ՝ հոդվածները կարող են պատճենահանվել եւ ուղարկվել փոստի, ֆաքսի միջոցով: Շահույթ հետապնդող կազմակերպություններից կամ անհատներից ստացվող առաջարկները ողջունելի չեն: «Loansome Doc®» ծառայության խնդրանքների իրականացումը թույլատրելի է: Միջգրադարանային վարկի դեպքում ARIEL եւ Prospero համակարգերի միջոցով էլեկտրոնային փոխանցումը թույլատրելի է: Այս եղանակով փոխանցվող նյութերը պետք է կրեն հեղինակային իրավունքի նշանը եւ համապատասխանեն կիրառելի հեղինակային իրավունքներին:

ՄԱՍ 3. **Արխիվային իրավունքներ**

Լիցենզիա տրամադրող կողմը գիտակցում է Հավելված 3.1-ում ներկայացված լիցենզիա ստացողի կողմից լիցենզավորված նյութերն ունենալու ու դրանց անժամկետ տնօրինելու իրավունքը: Լիցենզիա տրամադրող կողմը լիցենզիա ստացող կողմի համար ապահովում է նախադրյալներ Հավելված 3.2-ում ներկայացված Չբաժանորդագրված նյութերի ինքնարխիվացման համար: Այս իրավունքները, ինչպես նաեւ դրանք կիրառելու մեթոդները նկարագրվում են հետեւյալ կերպ.

1. Լիցենզիա ստացող կողմը ստեղծում է լիցենզավորված նյութերի մեկ (1) էլեկտրոնային կրկնօրինակ, ինչպես նաեւ մեկ (1) տպագիր օրինակ, որպեսզի դրանք պահպանվեն անվտանգության ու արխիվացման նպատակներով: Այս դեպքում CLOCKSS տեխնոլոգիայի կիրառումը թույլատրելի է: Այս տեղային արխիվացման իրավունքը կիրառելի է եւ՛ Հավելված 3.1-ում, եւ՛ Հավելված 3.2-ում ներկայացված նյութերի համար:
2. Այն դեպքում, երբ լիցենզիա ստացող կողմը որոշում է մերժել լիցենզավորված նյութերի մի որոշակի մաս, մինչ այդ բաժանորդագրված նյութերը հասանելի

կլինեն լիազորված օգտագործողներին այն նույն պայմաններով, որ նշված են ՄԱՍ 2-ում: Լիցենզիա տրամադրող կողմը համաձայնում է տրամադրել նախկինում բաժանորդագրված նյութերի համար շարունակական հասանելիություն այնքան ժամանակ, որքան տրամադրող կողմը պարտավոր է դա անել եւ որքան որ լիցենզիա ստացող կողմը շարունակում է հանդես գալ որպես սույն Պայմանագրի մասնակից:

3. Այն դեպքում, երբ սույն Պայմանագիրը դադարում է ուժի մեջ լինել ժամկետի ավարտի պատճառով, լիցենզիա տրամադրող կողմը շարունակում է 1997 թվականից մինչեւ վերջին լիցենզիա ստանալու տարին բաժանորդագրված նյութերի համար տրամադրել հասանելիություն: Նախնական ժամկետի ավարտից հաշվարկած՝ 2 տարին լրանալուց հետո լիցենզիա ստացող կողմին (եւ իր Լիազորված օգտագործողներին) SpringerLink-ի միջոցով կտրամադրվի անվճար հասանելիություն Springer հավաքածուին: Նախնական ժամկետի ավարտից հաշվարկված 2 տարին լրանալուց հետո Լիցենզիա ստացող կողմին կտրամադրվի արխիվային հասանելիություն, եթե՝
   - լիցենզիա ստացող կողմը ձեռք է բերում այլ ապրանք եւ կատարում է համապատասխան վճարում նման ապրանքի համար, ապա SpringerLink-ի միջոցով կտրամադրվի անվճար արխիվային հասանելություն Springer հավաքածուին, այնքան ժամանակ, որքան լիզենզիա ստացող կողմը շարունակում է վճարում կատարել այդ ապրանքների համար;
   - լիցենզիա ստացող կողմը ձեռք չի բերում այլ ապրանք եւ վերջինիս կտրվի երկընտրանք՝
     կա՛մ վճարել արխիվային ծառայության համար եւ հասանելիություն ստանալ SpringerLink հավաքածուին՝ մուծելով 1 տարվա ծառայության համար գումար (յուրաքանչյուր կազմակերպության դիմաց տարեկան 500 եվրո), որի չափը կարող է հետագայում աճել այն նույն տոկոսով, որով տարեկան աճում է լիցենզիա տրամադրող կողմի ամսագրերի արժեքը,
     կա՛մ ստանալ SpringerLink հավաքածուի հասանելիություն՝ արխիվային թվային պահեստավորման միջոցով, որի համար Կողմերը կպայմանավորվեն առանձին:

«Չբաժանորդագրված» նյութերի համար շարունակական հասանելիությունը կառաջարկվի համապատասխան վճարի մասին պայմանավորվելուց հետո: Միայն Էլեկտրոնային համակարգով ապահովված կոնսորցիումին «Չբաժանորդագրված» նյութերի տրամադրումը յուրաքանչյուր դեպքի համար կսահմանվի առանձին: Վերջինը կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ լիցենզիա տրամադրող կողմը շարունակում է կատարել իր պարտավորությունները անվտանգության եւ օգտագործման սահմանափակումների նկատմամբ, որոնք ներկայացված են սույն Պայմանգրում եւ այլ կիրառելի օրենքներում:

Հավելված 3.2-ում ներկայացված չբաժանորդագրված նյութերի համար լիցենզիա տրամադրող կողմը չի տրամադրում լրիվ տեքստով ֆայլեր կամ տեքստին կցված որեւէ նյութ: Միաժամանակ, լիցենզիա ստացող կողմը կարող է որոշակի

պայմանավորված գումար վճարել յուրաքանչյուր վերնագրի եւ յուրաքանչյուր տարվա համար՝ նախկինում հասանելի չբաժանորդագրված նյութերի հասանելիության համար:

ՄԱՍ4. **Լիցենզավորված նյութերի նկատմամբ հատուկ սահմանափակումները**

1. Լիցենզիա ստացող կողմը եւ իր համապատասխան լիազորված օգտագործողներն իրավունք չունեն փոփոխել, սեղմագրել, ձեւափոխել, թարգմանել կամ ածանցել որեւէ Լիցենզավորված նյութ այնպիսի եղանակներով, որոնք ոտնձգություն կհամարվեն հեղինակային իրավունքի նկատմամբ: Անթույլատրելի է հեռացնել, ջնջել կամ փոփոխել հեղինակային իրավունքի նշանը, ապրանքի կամ սեփականատիրոջ նշանները, հեղինակությունը հաստատող եւ այլ նշաններ; Լիազորված օգտագործողներն իրազեկ են այս սահմանափակումներին: Սույն Պայմանագրի կամ հեղինակային իրավունքները կարգավորող օրենքների դրույթների ու պայմանների խախտման դեպքում լիզենզիա տրամադրող ու ստացող կողմերն անմիջապես միջոցներ են ձեռնարկում լիազորված օգտագործողին զրկելու լսիցենզավորված նյութերի հասանելիությունից եւ որոշում են կայացնում լիցենզավորված նյութերի հասանելիության դադարեցման ու վերադարձի մասին՝ ներառյալ տպագրելու ու բեռնելու սահմանափակումները:

2. Անձնական կամ կազմակերպության կայքերում ամբողջական հոդվածների, գլուխների, հրատարակումների եւ գրքերի տեղադրումը եւ առաքումը թույլատրելի չէ:

3. Լիցենզավորված նյութերը ուղղակի կամ անուղղակի չեն կարող օգտագործվել ներքոհիշյալ եղանակներով՝

- առեւտրային եւ ոչ առեւտրային նպատակներով զգալի ծավալով կամ պարբերաբար վերարտադրում՝ վճարովի կամ անվճար սկզբունքով,
- վերաբաշխում, վերավաճառք, ենթալիցենզավորում, ներառյալ ծառայության համար գանձվող գումարի տեսքով՝ բացառությամբ Հավելված 2-ում ներկայացված եղանակի,
- ցանկացած եղանակով ցանկացած կողմին եզակի կամ բազմակի կրկնօրինակների պարբերական մատակարարում կամ բաշխում՝ բացառությամբ լիազորված օգտագործողների,
- լիցենզավորված նյութերի տեղաբաշխում այլ էլեկտրոնային ցանցերում՝ բացառությամբ լիցենզիա ստացող կողմի անվտանգ ցանցի:

Լիցենզիա ստացողի կամ լիազորված օգտագործողի կողմից դրամական փոխհատուցման նպատակով վաճառք, փոխանցում կամ այլ տեսակի շահարկում իրականացնելու համար անհրաժեշտ է ստանալ Լիցենզիա տրամադրող կողմի գրավոր մանրամասն թույլտվությունը: Մեծ քանակությամբ էլեկտրոնային կամ տպագիր նյութերի վերարտադրությունը կամ բաշխումը վաճառքի կամ դրան նպաստող նպատակներով՝ խստորեն արգելվում է:

ՄԱՍ 5 **Լիցենզիա տրամադրող կողմի պարտականությունները**

1. Բաժանորդագրման ժամկետի սկզբից լիցենզիա տրամադրող կողմը թվայնացված տարբերակով լիցենզավորված նյութերը հասանելի է դարձնում լիցենզիա ստացող կողմին ու լիազորված օգտագործողներին:
2. Համաձայն սույն Պայմանագրի Լիցենզիա տրամադրող կողմը ապահովում է լիցենզավորված նյութերի անընդհատ հասանելիություն եւ պարտավորվում է SpringerLink սերվերի խափանման դեպքում ընդհատված հասանելիությունը հնարավորինս արագ վերականգնել:
3. Լիցենզիա տրամադրող կողմն իրավասու է ետ վերցնել լիցենզավորված նյութերից այն նյութը կամ դրա մի մասը, որի նկատմամբ նա այլեւս չունի որեւէ իրավունք կամ՝ եթե կողմը բավականաչափ հիմքեր ունի կարծելու, որ դա հեղինակային իրավունքի նկատմամբ ոտնձգություն կամ ապօրինություն է: Լիցենզիա տրամադրող կողմն այս դեպքում կներկայացնի գրավոր ծանուցում:
4. Լիցենզիա տրամադրող կողմը լիազորված օգտագործողներին տրամադրում է օգնություն էլեկտրոնային «Հաճախ տրվող հարցեր» ծառայության, հեռախոսի, ֆաքսի եւ էլեկտրոնային փոստի միջոցով՝ Գերմանիայի Հայդելբերգ եւ ԱՄՆ-ի Նյու Յորք քաղաքներից՝ ժամը 09 ^{00}-ից մինչեւ 17 ^{00}-ը:

ՄԱՍ 6. **Լիցենզիայի գումարը.**

1. Լիցենզիա ստացող կողմը համաձայնում է լիցենզավորված նյութերի դիմաց վճարել լիցենզիա տրամադրող կողմին Հավելված 1-ում ամրագրված սկզբունքով: Լիցենզիա ստացող կողմն ընդունում է, որ լիցենզիայի գումարն ամբողջությամբ կամ մասամբ կարող են բացի լիցենզիա տրամադրող կողմից գանձվել Springer-ի այլ ընկերությունների կողմից:
2. Սեփական հայեցողությամբ՝ լիցենզիա ստացող կողմը կարող է ընտրել եւ ներառել լիցենզիա տրամադրող կողմի այլ էլեկտրոնային հրատարակություններ, որոնք ընդգրկված չեն Հավելված 3-ում՝ լիցենզիա տրամադրող կողմին տեղյակ պահելուց եւ անհրաժեշտ լիցենզիայի գումարը վճարելուց հետո: Այս դեպքում Հավելվածներ 1-ը եւ 3-ը կլրամշակվեն:

ՄԱՍ 7. **Անվտանգություն եւ հաշվետվություն**

1. Լիցենզիա ստացող կողմն ընդունում է, որ լիցենզավորված նյութերի ամբողջականության պահպանումը՝ ներառյալ դրանց վերարտադրության սահմանափակումները, օգտագործումը եւ փոխանցումը, ինչպես ձեւակերպված է սույն Պայմանագրում, եւ հավաստիացումը, որ լիցենզավորված նյութերի օգտագործողների քանակը սահմանափակ է՝ ներառելով միայն Լիազորված օգտագործողներին պարտադիր պայմաններ են: Լիցենզիա տրամադրող կողմը՝ իր սեփական հայեցողությամբ կարող է կասեցնել սույն Պայմանագիրը, եթե խաթարվեն նշված անվտագության սկզբունքները կամ Լիցենզիա տրամադրող կողմի հեղինակային իրավունքները:

2. Լիցենզիա ստացող կողմը պարտավորվում է իր լիազորված օգտագործողներին ծանուցել լիցենզավորված նյութերի նկատմամբ կիրառելի հեղինակային կամ այլ իրավունքների մասին: Լիցենզիա ստացող կողմը բոլոր ջանքերը կգործադրի բացառելու լիցենզիա տրամադրող կողմի կամ լիցենզավորված նյութերի նկատմամբ կիրառելի որեւէ իրավունքների խախտում: Լիցենզիա ստացող կողմը որեւէ խախտում նկատելու դեպքում անմիջապես տեղեկացնում է լիցենզիա տրամադրող կողմին եւ միջոցներ է ձեռնարկում դրանք կասեցնելու համար:
3. Լիցենզիա տրամադրող կողմն իրավասու է վերահսկել լիցենզավորված նյութերի հասանելիությունը եւ դրանց օգտագործումը՝ սխալ օգտագործման դեպքերը գրանցելու եւ լիցենզիա ստացող կողմին զգուշացնելու համար: Այն դեպքում, երբ լիազորված օգտագործողների կողմից նկատվի լիցենզավորված նյութերի ապօրինի օգտագործում, լիցենզիա տրամադրող կողմը կա՛մ դադարեցնում է տվյալ համացանցային պրովայդերին նյութերի տրամադրումը, կա՛մ լիցենզիա տրամադրող կողմի խնդրանքով լիցենզիա ստացող կողմը դադարեցնում է տվյալ հասցեին նյութերի տրամադրումը: Լիցենզիա տրամադրող կողմն առանց պատճառաբանված ծանուցագրի այս մասում նկարագրված որեւէ գործողություն չի ձեռնարկում:
4. Լիցենզավորված նյութերի օգտագործման մասին տեղեկությունների հավաքագրումն ու վերլուծությունը թույլ կտա Կողմերին գնահատել սույն Պայմանագրի էֆեկտիվությունը, լիցենզիա տրամադրող կողմից ստացված ենթակառուցվածքը եւ պայմանագրում հնարավոր լրամշակումներ անելու հնարավորությունները: Տեղեկատվության հավաքագրումը եւ վերլուծությունը կատարվում են յուրաքանչյուր ամիս մեկ անգամ պարբերականությամբ, եւ արդյունքները տրամադրվում են լիցենզիա ստացող կողմին՝ համաձայն Կոմերի միջեւ գրավոր վավերացված անվտանգության ու գաղտնիության սկզբունքների: Տեղեկատվությունը ծածկագրով ու օգտագործողի տվյալներով հասանելի կլինի համացանցում: Օգտագործման տվյալները համապատասխանում են COUNTER համակարգի 1-ին մակարդակին:

ՄԱՍ 8. ***Սույն Պայմանագրի ժամկետն ու ավարտը***

1. Սույն Պայմանագրի ժամկետը սկսվում եւ ավարտվում է Հավելված 1-ում ամրագրված ժամկետներում: Հավելված 1-ում նշված ժամկետը կարող է երկարաձգվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ Հավելված 1-ում ժամկետների ու լիցենզիայի համար գանձվող գումարի վերաբերյալ համապատասխան փոփոխություններ կատարելով:
2. Այն դեպքում, երբ Կողմերից մեկը խախտում է սույն Պայմանագրով ամրագրված դրույթներից որեւէ մեկը, կամ այն դեպքում, երբ լիցենզիա տրամադրող կողմը համոզված է, որ լիցենզիա ստացող կողմը որեւէ կերպ գերազանցել է սույն Պայմանագրով ամրագրված իր իրավասությունները՝ ապա խախտում արձանագրած կողմը մյուս կողմին գրավոր ծանուցում է այդ մասին: Խախտում թույլ տված կողմը ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում պետք է

վերականգնի խախտումը եւ գրավոր ծանուցի մյուս կողմին խախտումը վերացնելու մասին: Եթե խախտումը չի վերացվում 30 օրվա ընթացքում, ապա մյուս կողմը իրավասու է առանց ծանուցման դադարեցնել սույն Պայմանագիրը:

3. Որեւէ պատճառով սույն Պայմանագրի դադարման դեպքում՝ Լիցենզավորված նյութերի հասանելիությունն ընդհատվում է: Լիցենզիա տրամադրող կողմը շարունակում է ապահովել Լիցենզավորված նյութերի այն մասի շարունակական հասանելիությունը, որը մինչեւ խախտման դեպքը ունեցել է լիցենզիա տրամադրող կողմի տրամադրության տակ էր: Հասանելիությունը կապահովվի կա՛մ լիցենզիա տրամադրող կողմի սերվերի, կա՛մ երրորդ կողմի միջոցով, կա՛մ լիցենզիա ստացող կողմին էլեկտրոնային ֆայլերի տրամադրմամբ՝ այն պայմանով որ Լիցենզիա ստացող կողմը կշարունակի իր պարտականությունների իրականացումն անվտանգության եւ օգտագործման սահմանափակումների նկատմամբ:

ՄԱՍ 9. ԵՐԿԿՈՂՄ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Լիցենզիա ստացող կողմը կանի առավելագույնը մտավոր սեփականության, գաղտնի տեղեկատվության ու Լիցենզիա տրամադրող կողմի սեփականության իրավունքների անվտանգությունն ապահովելու համար:
2. Կողմերից ոչ մեկը չի հրապարակում սույն Պայմանագրի դրույթները, պայմանները եւ պամանգրի առարկան՝ ներառյալ Հավելվածների բովանդակությունը, վճարի չափը, եւ ՄԱՍ 7-ի 4-րդ կետով սահմանված տեղեկատվությունը, առանց մյուս կողմի գրավոր համաձայնության: Սույն դրույթը կիրառելի է սույն Պայմանագրի ժամկետի դադարից հետո, իսկ ցանկացած տեղեկություն, որն առնչվում է նշված սահմանափակումներին, մնում է գաղտնի: Միաժամանակ, այդ սահմանափակումները կիրառելի չեն, եթե հրապարակված տեղեկությունն արդեն իսկ հասարակական սեփականություն է, կամ՝ եթե վերջինս հրապարակվում է երրորդ անձի կողմից, որը Կողմերից ոչ մեկի հետ գաղտնիություն պահպանելու որեւէ պարտավորվածություն չունի:

ՄԱՍ 10. Բողոքի ներկայացում, երաշխիք, վնասների փոխհատուցում.

1. Լիցենզիա տրամդրող կողմը երաշխավորում է պահպանել լիցենզավորված նյութերի ամբողջականությունը եւ «SpringerLink» ցանցի անվտանգությունը:
2. Չնայած վերը նշվածին՝ լիցենզիա տրամադրող կողմը պատասխանատու չէ լիցենզավորված նյութերում առկա որեւէ սխալի, անճշտության կամ թերության համար, եթե դրանք որեւէ գործողության, բացթողումի կամ ոչ պատշաճ վերաբերմունքի հետեւանք են: Կողմերը բացարձակապես բացառում են որեւէ պատասխանատվություն վերնագրի, նյութերի վաճառքի կամ այլ նպատակով պիտանելիության համար ենթադրվող կամ հրատապ երաշխիքի խափանման համար: Լիցենզավորող կողմը պատասխանատվություն չի կրում որեւէ ուղղակի կամ անուղղակի, պատահական կամ պատժելի վնասների համար, որոնք առաջանում են Լիցենզավորված նյութերի կիրառման դեպքում: Լիցենզիա

ստացող կողմը պատասխանատվություն չի կրում լիազորված օգտագործողներից որեւէ մեկի կողմից սույն Պայմանագրի դրժման համար, քանի դեռ լիցենզիա ստացող կողմից նման արարքի համար որեւէ խրախուսանքի միջոց չի կիրառվել:

ՄԱՍ 11. **Լիցենզիա տրամադրող կողմի ապրանքանիշը**

1. Սույն Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում լիցենզավորված նյութերի վերանագրերը, ինչպես նաեւ դրանց վրա պատկերված ապրաքանիշները, տարբերանշանները, հրատարակչական կազմակերպության պիտակը ենթակա չեն փոփոխման կամ վերացման եւ պատկերվում են այնպես, ինչպես տրամադրվում է լիցենզիա ստացող կողմին եւ նրա Լիազորված օգտագործողներին:
2. Լիցենզիա տրամադրող կողմն իրավասու է զննելու եւ հավանություն տալու սույն Պայմանագրի Մասի 11-ի «1» կետով սահմանված պայմանները եւ որակի չափանաիշների պահպանմանը:
3. Վերնագրերի, ապրանքանիշների, տարբերանշանների, ընկերության անունների եւ հրատարակչական պիտակների իրավունքները խստագույնս պաշտպանված են:

ՄԱՍ 12. **Ընդհանուր դրույթներ.**

1. Լիցենզիա ստացող կողմը չի կարող ուղղակի կամ անուղղակի եղանակներով որեւէ երրորդ կողմի փոխանցել սույն Պայմանագրով սահմանված իրավունքները կամ պարտականությունները ամբողջությամբ կամ մասնակի, առանց Լիցենզիա տրամադրող կողմի գրավոր համաձայնության:
2. Պատերազմների, գործադուլների, հրդեհների, ջրհեղեղների, կառավարության կողմից սահմանված սահմանափակումների, ցանցի, սերվերի վնասվածքի կամ ոչնչացման կամ վերահսկման ոլորտից դուրս ծագած խնդիրների պատճառով լիցենզիա տրամադրողի կողմից սույն Պայմանագրով ամրագրված դրույթների կամ պայմանների կատարման թերությունները չեն համարվում որպես սույն Պայմանագրի դրույթների խախտում:
3. Այն դեպքում, երբ սույն Պայմանգրում ներառված դրույթներից որեւէ մեկը որեւիցե պատճառով դառնում է ուժը կորցրած, անօրինական կամ անիրագործելի, ապա այդ դրույթը չի ազդում սույն Պայմանագրի այլ դրույթների վրա: սույն Պայմանագիրը կշարունակի մնալ գործողության մեջ այնպես, ինչպես նախքան այդ հատկանիշները հայտնաբերելն այնքան ժամանակ, քանի դեռ ուժը կորցրած, անօրինական կամ անիրագործելի՝ այդ դրույթի հեռացումը չի առաջացնի այնպիսի նյութական փոփոխություն, որը կհանգեցնի սույնով ամրագրված գործողությունների ոչ բավարար հիմնավորում:

4. Սույն Պայմանագրի մեկնաբանման կամ դրանում ամփոփված դրույթների կիրառման ընթացքում վեճերի ծագման դեպքում Կողմերն ազատ են նախաձեռնել հետաքննություն, մինչեւ համապատասխան կողմի պետության իրավասու դատարանները:
5. Սույն Պայմանագիրը հանդիսանում է Կողմերի միջեւ միակ պայմանգիրը, եւ հաշվի չի առնում այն բոլոր գրավոր կամ բանավոր համաձայնությունները, բանակցությունները կամ մեկնաբանումները, որոնք եղել են նախքան սույն Պայմանագրի ստորագրումը:
6. Ոչ մի լրամշակում կամ պահանջվող հրաժարական ուժի մեջ չի մտնում, եթե այն չի ամրագրվել գրավոր ձեւով Կողմերի կամ նրանց ներկայացուցիչների միջեւ:
7. Սույն Պայմանագրի որեւիցե դրույթից հրաժարականը չի ենթադրում հրաժարական մնացած դրույթներից, ինչպես նաեւ՝ Սույն Պայմանագրի խզման հայտը չի դիտարկվում որպես նմանատիպ պայմանագրի կամ սույն Պայմանագրի դրույթների շարունակական խզում:
8. Լիցենզիայի դիմաց գանձվող գումարը չի ներառում որեւէ վաճառք, կիրառում, ետ պահում, ավելացած արժեքի հարկ, կառավարությանը մուծվող գումար կամ այլ տեսակի հարկեր, որոնք լիցենզիա ստացող կողմի պարտականությունն են:
9. Սույն Պայմանագրի համաձայն տրվող բոլոր ծանուցագրերը պետք է լինեն գրավոր տեսքով: Վերջիններս կարող են փոխանցվել առձեռն կամ համարվեն ստացված՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, եթե դրանք ուղարկվել են գրանցված կամ հավատարմագրված փոստային ծառայության միջոցով (ստացականի առկայության դեպքում): Եթե որեւէ ծանուցագիր ուղարկվում է հեռապատճեն սարքի միջոցով, ապա հաստատող կրկնօրինակները պետք է ուղարկվեն փոստով կամ առձեռն՝ նշված հասցեով: Կողմերից յուրաքանչյուրը կարող է փոխել իր հասցեն՝ մյուս կողմին այդ մասին գրավոր ծանուցելու պայմանով:

Հասցեներ՝

Springer Science and Business Media B.V.

P.O. Box 17
3300 AZ Dordrecht
The Netherlands
Library Sales Department

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե
Օրբելի 22, 0028
Երեւան
Հայաստանի Հանրապետություն
Սամվել Հարությունյան

10. **Սույն Պայմանագրի անբաժանելի մասն են կազմում՝**

Հավելված 1՝ Արժեքի հաշվարկը եւ պայմանները
Հավելված 2՝ Լիցենզիա ստացող կողմի նկարագիրը
Հավելված 3.1 ՝ Բաժանորդագրված Լիցենզավորված նյութերի ցանկը
Հավելված3.2՝Առանց սեփականության իրավունքի կամ շարունակական հասանելիության իրավունքով հասանելի նյութերը

Ի հավաստումն վերոնշյալի՝ Կողմերը կնքեցին սույն Պայմանագիրը

Լիցենզիա ստացող կողմից

Սամվել Հարությունյան

ՀՀ ԿԳՆ գիտության պետական
կոմիտե
Նախագահ

Լիցենզիա տրամադրող կողմից՝

Պիտեր Քոեբերգ

"Springer Science and Business Media BV"
ընկերություն
Վաճառքի բաժնի նախագահ

«23» -ը նոյեմբերի 2010 թ.